Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության

սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի

տնօրեն, քաղ. գիտ. թեկնածու,դոցենտ՝

Է. Հ. Օրդուխանյան

«18 հունիսի» 2024թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Էռնա Վլադիմիրի Հայրիյանի

«Ներդրումների վերաբերյալ վեճերի միջազգային լուծման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.06- «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Առաջատար կազմակերպությանը ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ներդրումների վերաբերյալ վեճերի միջազգային լուծման ժամանակակից իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի արդիականությունը, մեր կարծիքով, պայմանավորված է արբիտրաժային որոշումների հետևողականության ապահովման և դրա արդյունավետության բարձրացմամբ:

Գրախոսվող աշխատանքում ներկայացված են ներդրումային վեճերի լուծման արբիտրաժային կառուցակարգի ճգնաժամի հիմնական պատճառներն ու առանձնահատկությունները, հանգամանորեն հետազոտված են արբիտրաժային տրիբունալների որոշումների անհետևողականության և հակասությունների հիմնախնդիրները և դրանց ազդեցությունը ներդրումային վեճերի լուծման ժամանակակից արբիտրաժային կառուցակարգի համակարգային ճգնաժամի առաջացման վրա:

Հեղինակը բավարար չափով է օգտագործել մասնագիտական գրականությունը, նորմատիվ նյութը և դատական պրակտիկայի նյութերը, ինչը նրան հնարավորություն է ընձեռել հանգելու որոշակի եզրակացությունների և առաջարկությունների, որոնք ունեն տեսական ու գործնական նշանակություն:

Այս կապակցությամբ ատենախոսական աշխատանքի հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել ներդրումային վեճերի լուծման արբիտրաժային կառուցակարգերի ձևավորման անհրաժեշտությունը և պատմությունը, միջազգային առևտրային իրավունքից փոխառված հիմնական բնութագիրը, բացահայտել է ներդրումային վեճերի լուծման արբիտրաժային կառուցակարգի տարբերությունները նախկինում կիրառվող օտարերկրյա անձանց և նրանց սեփականության դիվանագիտական պաշտպանության, ինչպես նաև վեճերը ազգային դատարաններում քննելու կարգերից:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, մեր կարծիքով խնդրահարույց է «սուբյեկտիվ լեգիտիմություն» հասկացությունը, որը ներկայացվում է որպես պաշտպանության ենթակա դրույթներից մեկը (4-րդ դրույթը):

Իրավունքի տեսության մեջ գոյություն ունեն բացարձակ (իմպերատիվ), որոշակի հարաբերական և երկիմաստային հասկացություններ: Այսպես կոչված «սուբյեկտիվ լեգիտիմությունը» գնահատողական հասկացություն է, քանի որ այն չունի օբյեկտիվ չափորոշիչներ, առանձնապես, երբ խոսքը վերաբերում է դատական կամ արբիտրաժային վճիռներին և որոշումներին: Որպես կանոն, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են կատարման (գործադրման), որպես լեգիտիմ որոշումներ: Իսկ «սուբյեկտիվ լեգիտիմությունը» միայն կարող է խոչընդոտել դատական (արբիտրաժային) ակտերի կատարմանը (միջազգային և ազգային պրակտիկայում կան բազմաթիվ նման օրինակներ): Հետևաբար, այսպես կոչված, «սուբյեկտիվ լեգիտիմությունը» խոչընդոտում է դատական (արբիտրաժային) որոշումների կատարմանը:

Երկրորդ, աշխատանքում բավականին շատ են դատական (արբիտրաժային) պրակտիկայի նյութերը, սակայն ցանկալի կլիներ դրանցում տեսակարար կշիռը կազմեր ազգային նյութերը, ինչը, անշուշտ ավելի կբարձրացներ աշխատանքի գործնական նշանակությունը և հիմնավորվածությունը:

Երրորդ, աշխատանքը հիմնականում շարադրված է միջազգային իրավունքի ռուսական դոկտրինի դիրքերից: Այս առումով գտնում ենք, որ աշխատանքը բովանդակային իմաստով ավելի շահեկան կներկայանար, եթե ռուսական և

արևմտյան (եվրոպական) դոկտրինները օգտագործվեր միմյանց փոխլրացման սկզբունքով կամ մեթոդաբանությամբ:

Սակայն նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բնավ չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Աշխատանքի բովանդակության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի հրատարակած վեց գիտական հոդվածներում:

Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2024թ. հունիսի 17-ի նիստում, որում ներկա էին՝ բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, ինստիտուտի գլխավոր գիտախատող Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Ա. Ղազանչյանը, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Վ. Շուքուրյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Էոնա Վլադիմիրի Հայրիյանի «Ներդրումների վերաբերյալ վեճերի միջազգային լուծման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.06- «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի Պետաիրավական
հետազոտությունների բաժնի
վարիչ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, պատմ. գիտ. թեկնածու

Հ.Վ.Նազարյան: